Հաստատված է

Պետության և իրավունքի

տեսության և սահմանադրական

իրավունքի ամբիոնի 30. 08. 2022 թ.

նիստում (արձ. թիվ 1)

Ամբիոնի պետ՝ .....

(ստորագրություն)

.....

(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ Սահմանադրական իրավունք 2
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն E-mail: pitambion@mail.ru

ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Սաֆարյան E-mail: safamalya@mail.ru, հեռ. 093 57 75 89
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		Բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**2 (երկու)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ սահմանադրական իրավունք 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 62 ժամ, որից 18 դասախոսություն, 18 սեմինար պարապմունք, 26 ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում առանց եզրափակիչ գնահատման:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ Սահմանադրական իրավունք 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են ՀՀ ընտրական համակարգը, ՀՀ Ազգային Ժողովը, ՀՀ նախագահը, ՀՀ կառավարությունը, ՀՀ դատական իշխանությունը և

		դատախազության սահմանադրական հիմունքները, Սահմանադրական արդարադատությունը ՀՀ-ում, տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական հիմունքները:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ ՀՀ ընտրական համակարգի, ՀՀ Ազգային Ժողովի, ՀՀ նախագահի, ՀՀ կառավարություն, ՀՀ դատական իշխանություն և դատախազության, ՀՀ Սահմանադրական արդարադատություն, ՏԻՄ ինստիտուտների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • ուսումնասիրել ՀՀ ընտրական համակարգը, • ուսումնասիրել ՀՀ Ազգային Ժողովի ինստիտուտը, • ուսումնասիրել ՀՀ նախագահի ինստիտուտը, • ուսումնասիրել ՀՀ կառավարություն ինստիտուտը, • ներկայացնել Սահմանադրական արդարադատությունը ՀՀ-ում, • ուսումնասիրել ՀՀ դատական իշխանության ինստիտուտը, • ներկայացնել ՀՀ դատախազության սահամադրաիրավական առանձնահատկությունները, • ուսումնասիրել ՀՀ ՏԻՄ-ի ինստիտուտը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1.Տարբերակել ընտրական իրավունք և ընտրական համակարգ հասկացությունները, 2. բացահայտել ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքների առանձնահատկությունները, 3. բացահայտել ընտրական գործընթացի փուլերը, 4. բացահայտել ՀՀ ԱԺ ինստիտուտի առանձնահատկությունը, բնորոշ տարրերը, 5. բացահայտել ՀՀ նախագահի ինստիտուտի առանձնահատկությունը պառլամենտական կառավարման ժամանակ,

		6. բացահայտել ՀՀ կառավարության կազմավորման կարգը, կառուցվածքը և իրավասությունները, 7. բացահայտել ՀՀ կառավարության գործունեության ձևաչափը և իրավական ակտերը, 8. ներկայացնել ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը, 9. բացահայտել դատական իշխանության էությունը և դասակարգել դատական իշխանության սկզբունքները, 10. ներկայացնել դատական իշխանության մարմինների համակարգը, կազմակերպման և գործունեության կարգը, 11. սահմանել դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը, 12. ներկայացնել ՀՀ դատախազության կազմակերպման և իրավասության սահմանադրական հիմունքները, ինչպես նաև փաստաբանությունն ու դատական իշխանությանն աջակցող մյուս մարմինները, 13. ներկայացնել ՍԴ իրավական կարգավիճակը, կազմավորման կարգն ու անկախության երաշխիքները, 14. բացահայտել դատական սահմանադրական վերահսկողության ձևերը, 15. սահմանել ՍԴ լիազորությունները, 16. ներկայացնել սահմանադրական դատավարության ընթացակարգն ու դրա առանձնահատկությունները, 17. սահմանել տեղական ինքնակառավարման հսկացությունը, 18. ներկայացնել տեղական ինքնակառավարման համակարգը, մարմինները, մարմինների լիազորությունները և տեղական ինքնակառավարման երաշխիքները, 19. կատարել գործնական առաջադրանք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. Խմբագիր պրոֆ. Ն. Ա. Այվազյան/: «Երևանի համալսարան» հրատ., մաս 1 Երևան, 2016: 2. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Պ507 Հեղ. խումբ; Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան.-2 -րդ լրամշակված հրատ.-Եր.:Լուսաբաց

		հրատարակչատուն, 2016.- 628 էջ: 3. Մուրադյան Մ.Հ. Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր/ Մ.Հ. Մուրադյան. – Եր., Մ992 Ա/Ձ Արման Ասմանգուլյան, 2016 (մաս 1) - 224 էջ: 4. Այվազյան Ն., Այվազյան Ա., Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005: 2002.
Լրացուցիչ		1. Մ. Մուրադյան Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք (Ընդհանուր մաս): Եր. 2011. 2. Авакьян С.А. Констутиционное право. Энциклопедический словарь. Изд."Норма", М.,2000. 3. Автономов А.С. Констутиционное (государственное) право зарубежных стран. М., 2005. 4. Баглай М.Б. Конституционное право Российской Федерации. М., 2005. 5. Государственное право Германии /издатели: И. Изензее, П. Кирххов/. В 2-х томах, М., 1994. 6. Енгибарян Р.В. Сравнительное конституционное право. М., 2005 7. Енгибарян Р.В. Конституционное развитие в современном мире. М., 2007. 8. Зиновьев А.В. Конституционное право России: проблемы теории и практики. М., 2000. 9. Козлова Е.И.Кутафин О. Е. Констутиционное право России. М., 2006. 10. Конституционное /государственное/ право зарубежных стран /под ред. проф. Страшуна Б. А./. В 4-х томах. Том 1, М., 1993, том 2 М., 1995, том 3, М., 1998. 11. Маклаков В.В. Констутиционное право зарубежных стран (Общая часть). М., 2006. 12. Сравнительное конституционное право /отв. ред. проф. Чиркин В. Е./. М.,
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		ՈՒսումնական 2-րդ կիսամյակի համար ստուգման ձև նախատեսված է քննությունը
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա «Գերազանց»,

		«Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված» գնահատականների նշանակումով: Գնահատականների չափանիշներն են՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, ունակ է կատարելու վերլուծություններ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ճիշտ է մեկնաբանում սահմանադրա-իրավական նորմերը, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները, չի պատասխանում լրացուցիչ հարցերին. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն և պատասխանել լրացուցիչ հարցերին:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:

Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման**

	մեթոդաբանություն
1. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը և հարաբերակցությունը: 2. Ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքները: 3. Ընտրական գործընթացի փուլերը: 4. Ընտրությունների նախապատրաստումը: 5. Քվեարկության կազմակերպումը և անցկացումը: 6. Քվեարկության արդյունքներն ամփոփելու, ընտրության արդյունքները որոշելու և դրանք հրապարակելու կարգը: 7.Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ընտրության կարգը:	Հարցեր 1-6, - անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-7 - սեմինար պարապմունք: Հարց 7 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 2 **Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ազգային Ժողովը ՀՀ պառլամենտն է նրա ներկա-յացուցչական և օրենսդիր մարմինը: 2. Ազգային Ժողովի կազմակերպման կարգը և կառուցվածքը: 3. Ազգային Ժողովի պատգամավորը: 4. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները: 5. Ազգային ժողովի իրավասությունը: 6. Ազգային Ժողովի աշխատանքների կազմակերպման ձևերը:	Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր 1-8 - սեմինար պարապմունք. Խնդրահարույց հարցերի քննարկում: Հարց 1 - 8 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

7. Օրենսդրական գործընթացը Ազգային Ժողովում: 8. Ազգային Ժողովի աշխատակազմը:	

Թեմա 3 **Հայաստանի Հանրապետության նախագահը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՀՀ նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում: 2. ՀՀ նախագահի նտրության և լիազորությունների դադարման հիմքերն ու կարգը: 3. ՀՀ նախագահի լիազորությունները: 4. ՀՀ նախագահի ակտերը աշխատակազմը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարց 4 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-4 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):

Թեմա 4 **ՀՀ կառավարությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՀՀ կառավարությունը ՀՀ պետական մարմինների համակարգում: 2. Կառավարության կազմավորման կարգն ու կառու-	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում սովորողների կողմից ներկայացված

ցվածքը: 3. ՀՀ կառավարության իրավասությունը: 4. ՀՀ կառավարության գործունեության կազմակերպումը: 5. ՀՀ կառավարության և վարչապետի ակտերը: 6. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը:	խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-6 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):

Թեմա 5 **ՀՀ դատական իշխանության և դատախազության սահմանադրական հիմունքները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատական իշխանության էությունը և սկզբունքները: 2. Դատական իշխանության մարմինների համակկարգը, կազմակերպման և գործունեության կարգը: 3. Դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը: 4. ՀՀ դատախազության կազմակերպման և իրավասության ահմանադրական հիմունքները: 5. Փաստաբանությունն ու դատական իշխանությանն աջակցող մյուս մարմինները:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարց 5 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հաջորդ դասախոսության և սեմինար պարապմունքի ժամանակ: Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 6

Սահմանադրական արդարադատությունը ՀՀ-ում **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Սահմանադրական արդարադատությունը ահմանադրական վերահսկողության համակարգում: 2. Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, կազմավորման կարգն ու անկախության երաշխիքները: 3. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը: 4. Սահմանադրական դատարանի լիազորություններն ու դրանց իրականացման առանձնահատկությունները: 5. Սահմանադրական դատավարության ընթացակարգն ու դրա առանձնահատկությունները: 6. Սահմանադրական դատարանի ակտերը:	Հարցեր 1-6 - Դասախոսություն՝ սովորողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով: Հարցեր 1-6 - անցկացվում է սեմինար պարապմունք: Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք:

Թեմա 7 **Տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավակն հիմունքները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Տեղական ինքնակառավարման հասկացությունը: 2. Տեղական ինքնակառավարման համակարգը: 3. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: 4. Տեղական ինքնակառավարման երաշխիքները:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր 1-4 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:

Հարցաշար

«ՀՀ սահմանադրական իրավունք 2» առարկայի քննության

1. 58. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը և հարաբերակցությունը:
2. 59. Ընտրություններին ՀՀ քաղաքացիների մասնակցության սկզբունքները:
3. 60. Ընտրական գործընթացի փուլերը:
4. 61. Ընտրությունների նախապատրաստումը:
5. 62. Քվեարկության կազմակերպումը և անցկացումը:
6. 63. Քվեարկության արդյունքներն ամփոփելու, ընտրության արդյունքները որոշելու և դրանք հրապարակելու կարգը:
7. 64. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ընտրության կարգը:
8. 65. Ազգային Ժողովը ՀՀ պառլամենտն է նրա ներկայացուցչական և օրենսդիր մարմինը:
9. 66. Ազգային Ժողովի կազմակերպման կարգը և կառուցվածքը:
10. 67. Ազգային Ժողովի պատգամավորը:
11. 68. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները:
12. 69. Ազգային ժողովի իրավասությունը:
13. 70. Ազգային Ժողովի աշխատանքների կազմակերպման ձևերը:
14. 71. Օրենսդրական գործընթացը Ազգային Ժողովում
15. 72. Ազգային Ժողովի աշխատակազմը:
16. 73. ՀՀ նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում:
17. 73.ՀՀ նախագահի ընտրության և լիազորությունների դադարման հիմքերն ու կարգը:
18. 74. ՀՀ նախագահի իազորությունները:
19. 75.ՀՀ նախագահի ակտերը աշխատակազմը:
20. 76.ՀՀ կառավարությունը ՀՀ պետական մարմինների համակարգում:
21. 77. Կառավարության կազմավորման կարգն ու կառուցվածքը:
22. 78. ՀՀ կառավարության իրավասությունը:
23. 79. ՀՀ կառավարության գործունեության կազմակերպումը:
24. 80. ՀՀ կառավարության և վարչապետի ակտերը:
25. 81. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը:
26. 82. Դատական իշխանության էությունը և սկզբունքները:
27. 83. Դատական իշխանության մարմինների համակարգը, կազմակերպման և գործունեության կարգը:
28. 84. Դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակը:
29. 85. ՀՀ դատախազության կազմակերպման և իրավասութ¬յան ահմանադրական հիմունքները:
30. 86. Փաստաբանությունն ու դատական իշխանությանն աջակցող մյուս մարմինները:
31. 87. Սահմանադրական արդարադատությունը սահմանադրական վերահսկողության համակարգում:
32. 88. Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, կազմավորման կարգն ու անկախության երաշխիքները:
33. 89. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը:
34. 90. Սահմանադրական դատարանի լիազորություններն ու դրանց իրականացման առանձնահատկությունները:
35. 91. Սահմանադրական դատավարության ընթացակարգն ու դրա առանձնահատկությունները:
36. 92. Սահմանադրական դատարանի ակտերը:

37. 93. Տեղական ինքնակառավարման հասկացությունը:
38. 94. Տեղական ինքնակառավարման համակարգը:
39. 95. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:
40. 96. Տեղական ինքնակառավարման երաշխիքները: